ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԹՐԵՎԻՍ ԼԻ ՈՒԻՔՍԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐՈՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 44 ԵՎ 45-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Թրևիս Լի Ուիքսի դիմումի հիման վրա՝ «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» օրենքի 44 և 45-րդ հոդվածների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. 2026 թվականի սեպտեմբերի 23-ին* Սահմանադրական դատարան է մուտքագրվել Թրևիս Լի Ուիքսի (այսուհետ նաև՝ Դիմող, ներկայացուցիչներ՝ փաստաբաններ Անդրանիկ Մնացականյան, Էդգար Այվազյան, Արսեն Սարդարյան, Գուրգեն Ներսիսյան) դիմումը, որով Դիմողը խնդրել է.

«ՀՀ Սահմանադրության 27-րդ, 75-րդ և 78-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ Ազգային ժողովի կողմից 2024 թվականի նոյեմբերի 15-ին ընդունված «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի (...) 44-րդ հոդվածը և դրա հետ փոխկապակցված՝ նույն օրենքի 45-րդ հոդվածը՝ այնքանով, որքանով հնարավորություն չեն տալիս հանձնելու համար կալանավորում կիրառելու (դրա ժամկետը երկարաձգելու) մասին միջնորդությունը քննարկելիս

* Դիմողի՝ 2026 թվականի սեպտեմբերի 23-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի՝ 2026 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ Ա/1206-2026 գրությամբ վերադարձվել է Դիմողին՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24 և 25-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համապատասխանեցնելու և վերստին ներկայացնելու համար: **Համապատասխանեցված դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել** 2026 **թվականի հոկտեմբերի** 2-**ին**:

քննարկման առարկա դարձնել այլընտրանքային հարկադրանքի միջոցների, մասնավորապես՝ փնային կալանքի կիրառման հնարավորությունը՝ հաշվի առնելով նաև նշված դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունները»:

2. Ներկայացնելով թիվ ՇԴ/0295/06/25 գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը նշում է, որ վիճարկվող՝ «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածով, ինչպես նաև դրա հետ փոխկապակցված՝ 45-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումները չեն ապահովում անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտ երաշխիքները՝ միջազգային իրավական օգնության շրջանակներում իրավական պաշտպանության միջոցների կիրառման հարցում:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող իրավակարգավորումների կիրառման հետևանքով սահմանափակվում են անձի՝ իր իրավունքների պաշտպանության համար իրավական միջոցներից օգտվելու հնարավորությունները, քանի որ համապատասխան ընթացակարգերի շրջանակներում առկա չեն բավարար երաշխիքներ՝ անձի իրավունքների արդյունավետ պաշտպանության համար:

Ըստ Դիմողի՝ Սահմանադրության 75-րդ հոդվածով ամրագրված՝ հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի արդյունավետության ապահովման պահանջի տեսանկյունից՝ վիճարկվող իրավակարգավորումները պետք է հնարավորություն ընձեռեն անձին արդյունավետ կերպով իրացնելու և պաշտպանելու իր իրավունքները: Հետևաբար՝ Դիմողի պնդմամբ՝ իրավական օգնության տրամադրման և համապատասխան միջոցների կիրառման ընթացակարգերը պետք է բավարար չափով երաշխավորեն անձի իրավունքների իրացման իրական հնարավորությունը:

Դիմողը նշում է, որ որևէ կերպ հիմնավորված չէ, թե ի՞նչ տրամաբանությամբ կարող է օրենսդիրն այլ պետությանը հանձնելու նպատակով անձին ազատությունից զրկելիս կիրառելի համարել միայն ներպետական իրավական համակարգում գործող հարկադրանքի միջոցներից հնարավոր ամենախիստ հարկադրանքի միջոցը՝ այն

պայմաններում, երբ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված մյուս հիմքերով անձին ազատությունից զրկելիս կիրառելի են նաև այլ՝ առավել մեղմ հարկադրանքի միջոցները, մասնավորապես՝ տնային կալանքը, իսկ կալանքը կիրառվում է բացառապես որպես վերջին հնարավոր միջոց:

Արդյունքում՝ Դիմողը գտնում է, որ «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքով սահմանված այն դրույթները, որոնք հնարավորություն չեն տալիս հանձնման ընթացակարգի շրջանակում քննարկման առարկա դարձնել հանձնման ենթակա անձի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոց, մասնավորապես, տնային կալանք կիրառելու հարցը, հաշվի առնելով նաև տվյալ դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված նեղ մեկնաբանությունները, հակասում են Սահմանադրության 2-րդ գլխի 27-րդ հոդվածով ամրագրված՝ անձնական ազատության հիմնարար իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությանը:

3. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Սահմանադրական օրենք) 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ**.

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, **ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը**:

Սահմանադրական վերոհիշյալ դրույթն ամրագրվել է նաև Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը սահմանում է այն հիմքերը, որոնց

միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով կարող է անհատական դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

*գ) երբ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, **ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը**:*

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված **այլ դեպքերում**:*

Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումներով գործի քննությունը, ի թիվս այլնի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ **անհատական դիմումն ակնհայտ անհիմն է**:*

Սահմանադրական դատարանը 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ *«(…) անհատական դիմումների քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքերում, **երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է**: (…) Անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ, թեև դրանում բարձրացված հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ, **դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար**»:*

Սահմանադրական դատարանը վերոնշյալ աշխատակարգային որոշմամբ նաև արձանագրել է, որ *«(…) դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե **իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև**: **Նշված պահանջին***

համապատասխան՝ դիմողը պետք է նաև դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր *(…)»:*

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը 2009 թվականի նոյեմբերի 24-ի ՍԴՈ-839 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ *եթե դիմողի կողմից չի հիմնավորվում վիճարկվող դրույթի և իր իրավունքների ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապը, ապա տվյալ դիմումն* ***ակնհայտ անհիմն է:***

Այս առումով Սահմանադրական դատարանը հարկ է համարում փաստել, որ Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումների հիմնավորված լինելու պահանջը, համաձայն որի՝ դիմողը պետք է հիմնավորի, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքն է խախտվել, և ի՞նչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքի խախտման միջև, **չի կարող պահպանված համարվել բոլոր այն դեպքերում, երբ դիմողը պարզապես հղում է կատարում Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության՝ առանց ներկայացնելու վիճարկվող օրինադրույթի և իր համապատասխան հիմնական իրավունքի և (կամ) ազատության ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի առկայության բավարար հիմնավորումներ**:

Սահմանադրական դատարանը 2022 թվականի հուլիսի 12-ի ՍԴԱՈ-126 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ *«(…) անձը պետք է անհատական դիմումի շրջանակներում ուղղակիորեն մատնանշի և հիմնավորի վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կոնկրետ դրույթի և Սահմանադրության 2-րդ գլխում բովանդակվող իր հիմնական իրավունքի և/կամ ազատության ենթադրյալ հակասության* ***անմիջական*** *պատճառահետևանքային կապը: Այլ կերպ ասած՝* ***վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը պետք է ուղղակիորեն հանգեցնի Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված որևէ հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում շեշտադրել, որ Սահմանադրության 2-րդ գլխում բովանդակվող սահմանադրահիրավական սկզբունքներին վիճարկվող իրավանորմերի հակասությունը***

սահմանադրաիրավական իմաստով չի կարող անհատական գանգատարկման առարկա դառնալ, եթե վերջնարդյունքում չի հանգեցնում անձի՝ Սահմանադրության 2-րդ գլխով նախատեսված հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման»:

Վերը ներկայացված դրույթներով ամրագրված կարգավորումները, Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Սահմանադրական դատարանը հանգում է հետևյալ եզրակացության.

անհատական դիմումի շրջանակում նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը վիճարկելու պարագայում **անհրաժեշտ է բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, որ վիճարկվող դրույթը (սույն պարագայում՝ դրույթները, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունը) հանգեցրել է (են) Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության խախտման, որը սույն պարագայում տեղի չի ունեցել**:

Մասնավորապես՝ Դիմողը սույն անհատական դիմումի շրջանակներում վիճարկում է «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» օրենքի 44 և 45-րդ հոդվածների (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության)՝ Սահմանադրության 27, 75 և 78-րդ հոդվածներին համապատասխանությունը, որի կապակցությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Դիմողը վկայակոչել է վիճարկվող դրույթների (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) հակասությունը Սահմանադրության 27-րդ հոդվածով երաշխավորված՝ անձնական ազատության հիմնական իրավունքին, սակայն **բավարար կերպով իրավաբանորեն չի հիմնավորել իր՝ տվյալ հոդվածով երաշխավորված հիմնական իրավունքի խախտման փաստը, հետևաբար և՝ վիճարկվող դրույթների (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) և համապատասխան հիմնական իրավունքի ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի անմիջական առկայությունը:**

Փոխարենը՝ Դիմողը սահմանափակվել է իր՝ Սահմանադրության 27-րդ հոդվածով երաշխավորված հիմնական իրավունքի խախտման վերաբերյալ պնդումների պարզապես վկայակոչմամբ՝ բավարար կերպով իրավաբանորեն չհիմնավորելով իր կողմից վիճարկվող դրույթների (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) և նման խախտման ընդհանրությունը, դրանց միջև անմիջական պատճառահետևանքային կապի առկայությունը՝ հաշվի առնելով սույն կոնկրետ գործի հանգամանքները և առանձնահատկությունները:

Անդրադառնալով Դիմողի կողմից բարձրացված՝ վիճարկվող դրույթների (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության)՝ Սահմանադրության 75 և 78-րդ հոդվածներին համապատասխանության հարցին՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում փաստել, որ տվյալ հոդվածների բովանդակությունից բխում է, որ **կոնկրետ վերահսկողության պարագայում դրանք ինքնին չեն կարող դառնալ առանձին քննարկման առարկա, այլ կարող են դիտարկվել միայն որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության սահմանափակման լույսի ներքո:** Հետևաբար՝ Դիմողի կողմից վիճարկվող դրույթների (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության)՝ իր որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության խախտման հանգեցնելը չհիմնավորելը բացառում է վիճարկվող դրույթների (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) սահմանադրականության հարցի քննարկումը Սահմանադրության նաև 75 և 78-րդ հոդվածների հնարավոր խախտման համատեքստում:

Այսպիսով՝ սույն անհատական դիմումով չի հիմնավորվում «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» օրենքի 44 և 45-րդ հոդվածների (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) հակասությունը Սահմանադրության 27-րդ հոդվածին, հետևաբար և՝ 75 և 78-րդ հոդվածներին: Այսինքն՝ **սույն անհատական դիմումն ակնհայտ անհիմն է**, **ինչը գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից մերժելու հիմք է**:

Ուստի՝ սույն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից **ենթակա է մերժման**՝ Սահմանադրական

օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 69-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա՝ **դիմումն ակնհայտ անհիմն լինելու հիմքով**:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

«Թրևիս Լի Ուիքսի դիմումի հիման վրա՝ «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» օրենքի 44 և 45-րդ հոդվածների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

17 նոյեմբերի 2026 թվականի
ՍԴԱՈ-247